

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 29 » ապրիլ 2026թ. No 2412 - Ա

«ՍԵՆԵՔՍԻ» (ՖՐԱՆՍԻԱ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ՊԱՏՇԱՃ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 199-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի Հայտատուի դիմումի համաձայն Եվրասիական տնտեսական միության պատշաճ արտադրական գործունեության դիտարկումն իրականացվում է ԵԱՏՄ Դեղագործական դիտարկման կանոնների և համատեղ դեղագործական դիտարկման ապահովման կարգի համաձայն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 199-Ն որոշման N 2 հավելվածի 2-րդ կետի ՊԱԳ-ի հավաստագիրն արտադրողին է տրամադրում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 199-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կարգի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից արտադրողին տրված ՊԱԳ-ի դիտարկման հաշվետվության հիման վրա (...):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 199-Ն որոշման հավելված N 2-ի 8-րդ կետի՝ պատշաճ արտադրական գործունեության դիտարկման հաշվետվությամբ տրված դրական եզրակացության հիման վրա արտադրողին տրամադրվում է ՊԱԳ-ի հավաստագիր, իսկ բացասական եզրակացության դեպքում՝ մերժվում է ՊԱԳ-ի հավաստագրի տրամադրումը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 199-Ն որոշման հավելված N 2-ի 7-րդ կետի՝ ՀՀ առողջապահության նախարարությունում 5 աշխատանքային օրվա ընթացքում

արձակվում է հրաման հավաստագիր տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու մասին:

Հանաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 83 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության պատշաճ արտադրական գործունեության կանոնների պահանջներին համապատասխանության մասով դեղագործական տեսչական ստուգումներ անցկացնելու կանոնների 22-րդ կետի՝ Դեղերի արտադրությունը ճանաչվում է Պատշաճ արտադրական գործունեության կանոնների պահանջներին անհամապատասխան՝ եթե տեսչական ստուգման արդյունքների մասով հաշվետվության մեջ սահմանված են կրիտիկական և (կամ) էական անհամապատասխանություններ.

Հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/2145-26 առ 21.04.2026թ. գրությամբ ներկայացված Եվրասիական տնտեսական միության Պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) կանոններին անհամապատասխանության վերաբերյալ հաշվետվությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել «Սենեքսի» (Ֆրանսիա) արտադրական տարածքի՝ Պատշաճ արտադրական գործունեության հավաստագրի տրամադրումը:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) ապոհովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պաշտոնական կայքում:

2) սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով առաքել հայտատուին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157